ԱՍՏՂԻԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
(ՀՀ ԳԱԱ ԱԻ)

ԱՄՆ ՄԵՐՁԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՋՈՐՋ ԲՈՒՇ ԿՐՏՍԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (2001-2009 ԹԹ.)

ԱՄՆ-ի պատմության առաջին 170 տարիների ընթացքում պետական քաղաքականության հիմնական ուղղությունը մեկուսացման ու եվրոպական գործերին չմիջամտելու քաղաքականությունն էր և սրան զուգահեռ՝ Եվրոպայի հետ առևտրական կապերի ամրապնդման մեծապես կարևորումը: Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ԱՄՆ-ի շարունակական ներգրավումը համաշխարհային քաղաքականության մեջ նախանշեց երկբևեռ աշխարհակարգի ձևավորումը: Սառը պատերազմի տարիներին սա պայմանավորեց ԱՄՆ-ի զսպման քաղաքականությունը՝ արտահայտվելով տարածաշրջանային մակարդակներում՝ ազդեցության գոտիների բաժանմամբ: Հետ սառը պատերազմյան նոր աշխարհակարգը հրամայական պահանջ դրեց ԱՄՆ-ի առաջ՝ վերաիմաստավորելու իր արտաքին քաղաքականությունը՝ մասնավորապես պայքարի նոր թիրախ գտնելու միջոցով:

Արտաքին քաղաքականության վերաիմաստավորմամբ ազգային և, որոշակի առումով, քաղաքական էլիտայի նեղ շրջանակի շահերը բավարարելու տեսակետից թերևս առանձնանում է Ջորջ Բուշ կրտսերի նախագահության շրջանը: Մասնավորապես արտաքին քաղաքականության իրականացման հիմնական սկզբունքներն ու գործիքակազմը, ինչպես նաև դրանք ամրագրող իրավական փաստաթղթերի ամբողջությունը համարվող Բուշի դոկտրինան՝ որպես նեոռեյգանյան ժառանգություն, լավագույնս դրսևորվեց մերձավոր

արևելյան քաղաքականության մեջ՝ լեգիտիմացնելով[1] կանխարգելիչ հարվածների և ուժի կիրառումը ահաբեկչության դեմ պայքարի և ժողովրդավարության տարածման ու խթանման գործընթացում: Ջորջ Բուշ կրտսերի օրոք ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականությունն իրականացում ստացավ երեք ուղղություններով՝ պայքար ընդդեմ ահաբեկչության, զանգվածային զենքի տարածման կանխարգելում և ժողովրդավարության հաստատում ու խթանում[2]: Այս քաղաքական ուղղություններն ամրագրվեցին Ազգային անվտանգության ռազմավարություններով (2002թ., 2006թ.)[3] ու դրանցից բխող այլ պաշտոնական փաստաթղթերով և բազմիցս հաստատվեցին ԱՄՆ-ի նախագահի և վերջինիս վարչակազմի տարբեր ներկայացուցիչների ելույթներով[4]:

2001թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունից 9 օր անց Ջ. Բուշը հայտարարեց լայնամասշտաբ պայքար ընդդեմ ահաբեկչության (WaronTerror), որը դուրս էր գալու միայն ալ-Քաիդային ոչնչացնելու շրջանակներից, և ինչպես նշված էր ԱՄՆ անվտանգության ռազմավարության փաստաթղթում, ահաբեկչության դեմ պայքարը լինելու էր համաշխարհային նախաձեռնություն՝ անորոշ ժամկետով, որի ընթացքում ԱՄՆ-ն օգնելու էր ահաբեկչության դեմ պայքարող ազգերին և պատասխանատվության էր ենթարկելու ահաբեկիչներին ապաստան տրամադրող և աջակցող պետություններին[5]: Կայունությունը, խաղաղությունը և անվտանգությունը ապահովվելու էին ակտիվ գործողությունների միջոցով, ինչն էլ Իրաքում՝ որպես «ահա-

---

[1] The Bush Doctrine, October 7, 2002, https://carnegieendowment.org

[2] Pressman J., Power without Influence: The Bush Administration's Foreign Policy Failure in the Middle East, International Security, Vol. 33, № 4 (Spring, 2009), p.152.

[3] The National Security Strategy of the United States of America, 2002, http://nssarchive.us/NSSR/2002.pdf, The National Security Strategy of the United States of America, 2006, https://georgewbush-whitehouse.archives.gov

[4] Selected Speeches of President George W. Bush 2001 – 2008, https://georgewbush-whitehouse.archives.gov, Pressman J., նշվ. աշխ.:

[5] Address to the joint session of the 107th Congress, September 20, 2001, Selected Speeches of President George W. Bush 2001 – 2008, https://georgewbush-whitehouse.archives.gov,

բեկչության համաշխարհային հովանավորի»[6] տարածքում ԱՄՆ-ի ուղղակի ռազմական ներգրավվածությունն եղավ[7]:

Ահաբեկչության դեմ պայքարի համար մշակվել էին երեք ռազմավարություններ. առաջինը նեղ իմաստով պայքարն էր ընդդեմ ահաբեկիչների, և, մասնավորապես, սա «Afghanistan-first» ռազմավարությունն էր, քանի որ ուղղված էր թալիբների դեմ, որոնք մերժել էին հրաժարվել ալ-Քաիդային աջակցելուց: Այս ռազմավարությունը ներառում էր հակաահաբեկչական պայքարի ամբողջ տեխնիկան և ուներ միջազգային հանրության աջակցությունը: Երկրորդը կանխարգելման և գերակայության ռազմավարությունն էր, ինչը դրսևորվեց Իրաքում. կարելի է ենթադրել, որ սա առաջին ռազմավարության հայեցակարգումն (կոնցեպտուալիզացիա) էր, զարգացման հաջորդ փուլը և մասնակիորեն առաջին ռազմավարության շարունակությունն էր:

Երրորդ ռազմավարությունը տարածաշրջանի ժողովրդավարացմանն ուղղված քայլերն էին, որի միջոցով ահաբեկիչներին ֆիզիկապես ոչնչացնելուց հետո պետք է վեր հանվեին ահաբեկչության պատճառները և գտնվեին լուծումներ[8]:

ԱՄՆ պաշտոնապես չէր կապում ահաբեկչությունն իսլամի հետ. ավելին, սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունից ընդամենը 6 օր անց Վաշինգտոնի իսլամական կենտրոնում ունեցած իր ելույթում Ջորջ Բուշը տարանջատեց իսլամը ահաբեկչությունից՝ նշելով, որ իսլամը խաղաղություն է՝ ի հակադրում չարիք հորջորջվող ահաբեկիչների[9]: Հատկապես շեշտվում էր, որ ահաբեկչության դեմ պայքարը կրոնական չէ և որևէ պարագայում այն չպետք է որակվեր

---

[6]The National Security Strategy of the United States of America, 2002, p.i-ii,http://nssarchive.us/NSSR/2002.pdf

[7]Նույն տեղում, էջ 14:

[8] Dunn H. D., Bush, 11 September and the Conflicting Strategies of the 'War on Terrorism', Irish Studies in International Affairs, Vol. 16 (2005), p. 12.

[9] George W. Bush, Address at Islamic Center of Washington, D.C, delivered 17 September 2001, Washington, D.C., www.americanrhetoric.com

որպես արշավ մահմեդական հավատքի դեմ: Թերևս սրա լավագույն բացատրությունից մեկը տալիս է Էլիոտ Աբրամսը, ով Ջ. Բուշ կրտսերի վարչակազմում ազգային անվտանգության բարձր օղակի աշխատակիցներից էր: Ըստ Է. Աբրամսի, ելնելով այն փաստից, որ ԱՄՆ արդեն իսկ ներգրավված էր Մերձավոր Արևելքում ընթացող գործընթացներում (այսինքն՝ սկզբից Աֆղանստանում, իսկ հետո արդեն Իրաքում ռազմական գործողությունների տեսքով), ապա ցանկացած անզգույշ հայտարարություն կարող էր հիմք հանդիսանալ մեղադրելու ԱՄՆ-ին իսլամի դեմ պայքարելու մեջ[10]: Հարկ է նշել, որ կրոնական հայացքների հանդեպ զուսպ դիրքորոշումը շարունակվեց պահպանվել նաև Բուշին հաջորդած դեմոկրատ Օբամայի կողմից[11]:

Այնուամենայնիվ, չնայած Բուշ կրտսերի վարչակազմը ջանք չէր խնայում գոնե պաշտոնապես տարանջատելու մուսուլմաններին ահաբեկիչներից, ակնհայտ էր, որ իր ներքին և արտաքին քաղաքականությամբ էլ ավելի էր խորացնում Արևմուտքի և Իսլամական աշխարհի միջև առկա հակասությունները: Ի վերջո կոնսերվատիվ հանրապետական վարչակազմի մոդել համարվող Բուշի դոկտրինան, որը ձևավորվեց վերազգային ահաբեկչության սպառնալիքի պայմաններում, հիմնվում էր արևմտյան ժողովրդավարության և միջազգային ահաբեկչական կազմակերպությունների հակաարևմտյան իսլամական ֆունդամենտալիստական արժեհամակարգի հակասությունների վրա[12]:

---

[10] Hillary Clinton Sides with George W. Bush on ‘Radical Islam’: “We are not at war with Islam or Muslims. We are at war with violent extremism”, Huffington Post, November 14, 2015, https://www.huffpost.com

[11]Why Obama Can't Say 'Radical Islam'. U.S. allies in the war on terrorism have to appease citizens who share ideas with the fundamentalists, January 19, 2015, https://www.bloomberg.com

[12]Антюхова Е. А., Политика США в ближневосточном регионе и взаимоотношения с союзниками по НАТО в период первого правления республиканской администрации Дж. Буша-младшего, Антюхова Е. А., Вестник Брянского государственного университета, №2, 2017, с. 20-21, www.mgimo.ru

Ի լրումն վերոնշյալի՝ հարկ է նշել, որ գիտական-վերլուծական շրջանակների կողմից ևս համաշխարհային ահաբեկչությունը մեծավ մասամբ ասոցացվում էր կրոնական ալիքի վրա ձևավորված իսլամական ֆունդամենտալիստական ահաբեկչության հետ[13]: Սակայն ահաբեկչության ակունքները Իրաքում փնտրելը չուներ ստույգ հիմքեր, քանի որ Սադդամ Հուսեյնը ոչ միայն չէր աջակցում ալ-Քաիդային, այլև ավելին, ուներ թշնամական հարաբերություններ[14]:

Համաշխարհային պայքարն ընդդեմ ահաբեկչության ունեցավ երկակի հետևանքներ: Իշխանությունները կարողացան ապահովել ամերիկյան քաղաքացիների պաշտպանությունը, և սեպտեմբերի 11-ից հետո ԱՄՆ տարածքում այլևս տեղի չունեցավ նմանատիպ մեծամասշտաբ ահաբեկչական գործողություն, եթե հաշվի չառնենք 2006թ. և 2007թ. անհաջող փորձերը: Ի հակադրումն վերոնշյալի՝ Իրաք ներխուժումից հետո ահաբեկչության աննախադեպ աճ գրանցվեց Արևմտյան Եվրոպայի և Հյուսիսային Աֆրիկայի երկրներում, այն պարագայում, երբ մինչ 2001-2003 թթ. երբեք նման դեպքեր չէին արձանագրվել: Իրաքի նվաճումից հետո կոալիցիոն ուժերի ներկայացուցիչների կողմից թույլատրված կամայականություններն ու ապօրինությունները էլ ավելի գրգռեցին մինչ այդ եղած հակաամերիկյան տրամադրությունները: Դրանով կարելի է բացատրել ԻԼԻՊ-ի հետագա ծավալումը և ազդեցության աճը, նամանավանդ, եթե հաշվի առնենք, որ վերջինիս ինքնահռչակ խալիֆ աբու-Բաքր ալ-Բաղդադին 2005-2009թթ. անազատության մեջ էր պահվում ամերիկյան զինվորների կողմից, ինչն էլ իր ազդեցությունն ունեցավ վերջինիս հայացքների

---

[13] Kaplan J., The Four Waves of Modern Terrorism, www.oxfordre.com, ըստ Կալիֆոռնիայի համալսարանի պրոֆսոր Դ. Ռապոպորտի, ահաբեկչական գործողությունները տարբերակող «4 ալիքների» տեսանկյունից Ալ-Քաիդա ծայրահեղական-արմատական ահաբեկչական կազմակերպությունը, որը պատկանում էր իսլամի վահաբիստական ուղղությանը, 4-րդ՝ կրոնական ալիքի վառ դրսևորում էր:

[14] Galbraith P. W., The End of Iraq: How American Incompetence Created a War without End, New York, 2006, p. 75.

ձևավորմանն հետագա գործողությունների ծավալման վրա[15]: Այս առումով կարևոր ենք համարում մեջ բերել Մեծ Բրիտանիայի նախկին վարչապետ Թոնի Բլերի՝ CNN լրատվականին տրված հարցազույցից հատված, որում նա հաստակ նշում է, որ ԻԼԻՊ-ի առաջացման հարցում իրենց գործուն մասնակցությունն ունեցան ԱՄՆ-ը և դաշնակիցները՝ Իրաք ներխուժելով[16]:

Զանգվածային ոչնչացման զենքի (ԶՈԶ) դեմ պայքարն ընդհանուր առմամբ կարելի է դիտարկել ահաբեկչության դեմ պայքարի համատեքստում՝ որպես լրացուցիչ բաղադրատարր, որը ևս իր լավագույն արտահայտությունը ստացավ Իրաքի դեպքում: Ըստ Ջ. Բուշի՝ ահաբեկիչները և ԶՈԶ ստեղծող պետությունները նույն մետաղադրամի հակառակ կողմերն էին: Իրաքի կողմից միջուկային, քիմիական և կենսաբանական զենքի տնօրինման մասին տեղեկությունները բազմիցս են հնչեցվել ամերիկյան վարչակազմի տարբեր ներկայացուցիչների կողմից: Ազգային հետախուզության 2002թ. գնահատման զեկույցի համաձայն՝ Իրաքը տարեկան ծախսում էր 3 մլրդ ԱՄՆ դոլարի չափ գումար միջուկային զենքի ստեղծման համար, և հավանական էր համարվում, որ մինչև տասնամյակի ավարտը Իրաքը կունենար միջուկային զենք[17], որն էլ կասեցնելու ամենաարդյունավետ միջոցը դիտարկվեց կանխարգելիչ հարվածի կիրառումը[18]: Իրաքի նվաճումից մեկ տարի անց, սակայն, Իրաքի որոնողական-մշտադիտարկման խմբի կատարած վերլուծությամբ պարզվեց, որ Իրաքը չուներ համապատասխան կարողությունները վերականգնելու համար մինչև Ծոցի պատերազմը ունեցած միջուկային ծրագիրը[19]: Այսպիսով, ԶՈԶ դեմ պայքարը, որը Իրաք ներխուժելու հիմնական

---

[15] D'alessandro A., The Bush administration decision to invade Iraq: The Question of rationality and groupthink, p. 16.

[16]Тони Блэр связал появление ИГ со вторжением США и союзников в Ирак, 25 октября 2015, www.lenta.ru

[17] D'alessandro A., նշվ. աշխ., էջ 26:

[18] Schmidt B. C. & Williams M. C., The Bush Doctrine and the Iraq War: Neoconservatives Versus Realists, Security Studies, Vol. 17, Issue 2, 2008, p. 197.

[19] D'alessandro A., նշվ. աշխ., էջ 27:

պատճառներից մեկն էր, ոչ այլ ինչ էր, քան պարզապես չափազանցված և ոչ պատշաճ գնահատված տեղեկություն, որի արդյունքում Իրաքում ներգրավվելու նպատակով ԱՄՆ-ը հարյուրավոր միլիարդներ ներդրեց և ունեցավ 35000 զոհ և վիրավոր[20]:

Փաստացիորեն ԶՈԶ-ի տարածման իրաքյան ծրագիրը վաղուց արդեն դադարել էր գործել՝ շնորհիվ Ծոցի պատերազմից հետո դրված պատժամիջոցների և Ատոմային էներգիայի միջազգային գործակալության հետևողական աշխատանքի: Իրաքում ԶՈԶ-ի փնտրտուքները հանգեցրին նրան, որ ԱՄՆ-ի ուշադրությունից որոշակիորեն դուրս մնացած Իրանում և Հյուսիսային Կորեայում խթանվեցին միջուկային զենքի ստեղծման ծրագրերը: Ավելին, ելնելով այն հանգամանքից, որ Սադդամ Հուսեյնին ալ-Քաիդան ընկալում էր որպես թշնամի, կարելի էր բացառել նաև Հուսեյնի կողմից նման զենքի հանձնումը ահաբեկիչներին: Ի լրումն վերոնշյալի, հարկ է նշել նաև, որ Բեն-Լադենը հովանավորում էր Իրաքյան Քրդստանում Սադդամի դեմ պայքարող իսլամիստներին: Այսպիսով ԶՈԶ-ի տարածման դեմ ԱՄՆ-ի պայքարն էլ վստահաբար կարելի է որակել ձախողված[21]:

Կանխազգալով ԶՈԶ-ի դեմ պայքարի ռազմավարության տապալումը՝ ԱՄՆ-ի նախագահի վարչակազմը հիմնական շեշտը դրեց Իրաքում և Մերձավոր Արևելքում մարդու իրավունքների պաշտպանության վրա՝ վկայակոչելով Սադդամ Հուսեյնի վարչակարգի կողմից թույլ տրված հանցագործությունները[22]:

---

[20] Pressman J., նշվ. աշխ., էջ 166:

[21] D'alessandro A., նշվ. աշխ., էջ 29:

[22] Harris P. and Heslop K., Iraq's dirty dozen, Sun 16, Mart 2003. ԱՄՆ Պետդեպարտամենտի տվյալների համաձայն Իրաքում մարդու իրավունքների դեմ իրականացված հանցագործությունների և չարաշահումների մեծ չափաբաժին պատկանում էր Սադդամ Հուսեյնին և նրա անմիջական շրջապատին, որի մեջ էին մտնում վերջինիս որդիները, եղբայրները, որոշ նախարարներ, վարչապետը: ԱՄՆ օգտագործում էր «Սադդամի դյուժին» անվանումը՝ ևս մեկ անգամ ընդգծելու համար, որ Իրաք ներխուժումը պայքար է ոչ թե Իրաքի ժողովրդի, այլ Սադդամ Հուսեյնի և Բաաս կուսակցության ղեկավարության դեմ:

ԱՄՆ-ի գլխավոր նպատակը տարածաշրջանում ամրապնդվելն էր՝ տեղում ամերիկամետ ռեժիմների հաստատմամբ՝ արևմտյան տիպի ժողովրդավարություն ներդնելու ճանապարհով: Սակայն, համադրելով նրա տարածաշրջանային քաղաքականությունը, այս ուղղության երկարաժամկետ և կարճաժամկետ տեսլականները կյանքի կոչելու մեթոդները և իրականացման նպատակները, ապա կարելի է տեսնել ակնհայտ հակասություն. ԱՄՆ-ի ժողովրդավարության խթանման քաղաքականությունն իրականացվում էր անհավասարաչափ կերպով՝ կիզակետում պահելով Իրաքը, Լիբանանը և Իրանը, մինչդեռ գործընկեր և դաշնակից Սաուդյան Արաբիայի, ինչպես նաև Եգիպտոսի վրա գործադրվում էր չափավոր ճնշում[23]:

Իրականում դաշնակիցների անվտանգությունն ապահովվման անհրաժեշտությունը պայմանավորված էր ածխաջրածնի ազատ հոսքի, տարածաշրջանային ռազմական և առևտրական հաղորդակցման ուղիների նկատմամբ վերահսկողության հաստատման և սեփական շահերի կայունության ամրապնդմամբ, որ գերակայում էին իրական ժողովրդավարացմանը, ավելին՝ քողարկվում էին ժողովրդավարացման քաղաքականությամբ: Ժողովրդավարության անհավասար ներդրումը, ապաբաասականացման գործընթացը (Բաաս կուսակցության հնարավորինս օտարումը իշխանությունից) էլ ավելի խորացրին Իրաքում շիաների և սունիների միջև առկա հակասությունները, շիաներին հովանավորելը ոչ միայն առաջ բերեց սուննիական խռովություն /surge/, այլև ուժեղացրեց Իրանի ազդեցությունը տարածաշրջանում:

Ընդհանուր հայտարարի բերելով և ամփոփելով վերոշարադրյալը՝ կարելի է տալ Ջ. Բուշ կրտսերի մերձավորարևելյան քաղաքականության ընդհանուր գնահատականը.

• ԱՄՆ նախագահի վարչակազմն իր արտաքին քաղաքականությունն իրականացնելիս հիմնվում էր կոշտ ուժի կիրառման վրա (hardpower)՝ քիչ օգտագործելով հարցերի լուծման դիվանագիտական

[23] Pressman J., նշվ. աշխ., էջ 176:

եղանակը: Պետքարտուղար Ք. Փաուելը և նրա տեղակալ Ռ. Արմիթիջը իրենց հարցազրույցներում և ելույթներում պետդեպարտամենտը և դիվանագետներին համարում էին խաղաղարարներ, իսկ դիվանագիտությունը՝ հզորության պակասի արտահայտություն[24]:

Դիվանագիտական ռեսուրսը չօգտագործվեց նաև 2003թ., երբ Իրանը պատրաստակամություն հայտնեց դիվանագիտական երկխոսության ԱՄՆ-ի հետ, սակայն Բուշի վարչակազմն ընդառաջ գնալու շահագրգռվածություն ընդհանրապես չդրսևորեց: Արդյունքում կորսվեց երկխոսության պահը, իսկ Իրանը, որը 2002-2003թթ–ից երկխոսություն հաստատելու նպատակով համագործակցում էր Միջուկային էներգիայի միջազգային գործակալության հետ, Մ. Ահմադինեջադի նախագահ դառնալուց հետո՝ 2006թ-ից սկսած, ակտիվացրեց իր միջուկային ծրագիրը[25]:

Իրաք ներխուժումից հետո Բուշի վարչակազմը ձախողեց ոչ միայն Իրաքում միմյանց դեմ պայքարող կողմերի ղեկավարների միջև երկխոսության հարթակ ստեղծելու և փոխզիջման հասնելու հնարավորությունը՝ ի տարբերություն նախորդ նախագահի հարավսլավական նախադեպի[26], այլ նաև՝ հետպատերազմյան Իրաքի վերականգնման աշխատանքները: Մասնավորապես, հետպատերազմյան Իրաքի «վերակառուցման» պատասխանատվությունը դրվեց պաշտպանության նախարարության վրա, այն պարագայում, երբ պետքարտուղարությունն էր տիրապետում տարիների փորձով կուտակված ինստիտուցիոնալ հիշողությանը և պետականաշինությանն առնչվող կարողություններին ու անհրաժեշտ տվյալներին: Արդյունքում Փոլ Բրեմերի ժամանակավոր կոալիցիոն վարչությունը վերոնշյալ հարցը լուծելու համար չընդգրկեց ոլորտի լավագույն մասնագետներին: Եվ,

---

[24] Pressman J., նշվ. աշխ., էջ 170:

[25] Galbraith P. W., նշվ. աշխ., էջ 75:

[26]Pressman J., նշվ. աշխ., էջ 170: Քլինթոնը բալկանյան խնդրին լուծում տալու նպատակով 1995թ. Դեյթոն հրավիրեց Հարավսլավիայում միմյանց դեմ պայքարող կողմերի ղեկավարներին:

չնայած Իրաքը վերակառուցելու և ժողովրդավարությունը խթանելու ու ամրապնդելու վեհ հավաստիացումներին, ԱՄՆ-ի իշխանություն-ների համար ռազմական հաղթանակի խորհրդանիշը եղավ միայն Սադդամին իշխանությունից հեռացնելը և Իրաքում հաստատվելը[27]:

• Մերձավորարևելյան քաղաքականության իրականացման ընթացքում թույլ տրված սխալները և բացթողումները չընդունելը, դրանցից դասեր չքաղելը և փոփոխվող իրադրությանը հարմարվելու ցանկության բացակայություն: Այսպես օրինակ, երբ պարզ դարձավ, որ ՋՈՋ-ի տարածման մասին տվյալները չէին համապատասխանում իրականությանը, ԱՄՆ-ի իշխանություններն առաջին պլան մղեցին ժողովրդավարության խթանումը տարածաշրջանում: Իսկ երբ Ք. Փաուելը բարձրաձայնեց, որ իրաքյան գործողություններն ամենայն հավանականությամբ այլ ընթացք կունենային, եթե ՋՈՋ-ի գոյության մասին ապացույցներն առավել ստույգ լինեին, նրան խորհուրդ տվեցին հետ կանգնել իր հայտարարությունից: Այնուամենայնիվ, միայն Ք. Փաուելը չէր, որ կասկածի տակ էր դնում ամերիկյան հետախուզության ձեռք բերած տեղեկությունները: Գերմանական Դաշնային հետախուզական ծառայությունն իր հերթին մեղադրում էր ԱՄՆ Կենտրոնական հետախուզական վարչությանը և Սպիտակ տանը՝ ոչ պաշտոնական և տակավին չհստակեցված տեղեկություններն Իրաքում կենսաբանական զենքի ստեղծման ուղղությամբ շարժական լաբորատորիաների առկայության վերաբերյալ որպես ճշմարտություն ներկայացնելու մեջ[28]:

Իրաք ներխուժումից հետո, երբ վերջինիս ներքին պառակտվածությունը հասավ իր գագաթնակետին՝ վերածվելով քաղաքացիական պատերազմի, ԱՄՆ-ի նախագահը և իր վարչակազմի ներկայացուցիչները խուսափում էին օգտագործել քաղաքացիական պատերազմ եզրույթը (այն առաջին անգամ Ջ. Բուշը օգտագործեց 2006թ. դեկտեմբերին՝ ներկայացնելով այն ոչ հաղթանակ-ոչ պարտություն

[27]Pressman J., նշվ. աշխ., էջ 170:
[28]Defector admits to WMD lies that triggered Iraq war, www.theguardian.com

լույսի ներքո)[29]: Սրա պատճառը ոչ միայն ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության իրականացման նեոկոնսերվատորական սկզբունքներն էին և ամերիկյան բացառիկության հայեցակարգը, այլ նաև այն, որ 2004 թ. կայանալու էին նախագահական ընտրություններ, իսկ Իրաքում ԱՄՆ-ի ունեցած խնդիրների և բացթողումների բարձրաձայնումը հարցականի տակ կդնեին Բուշի հաղթանակը ընտրություններում:

Հարց է առաջանում, թե արդյո՞ք ժողովրդավարացման խթանումը նպաստեց ԱՄՆ-ի դիրքերի ամրապնդմանը տարածաշրջանում: Ինչպես նշում էին ժամանակակիցները սա «ինքնատիպ վիլսոնականությունն էր՝ միախառնված ամերիկյան աննախադեպ ռազմական հզորության և բացառիկության գաղափարի հետ»: Եթե ԱՄՆ-ում լիբերալները, հիմնվելով իդեալիստական հայացքների վրա, համակարծիք էին այս առումով նեոկոնսերվատորներին և գտնում էին, որ ժողովրդավարության և քաղաքացիական ազատությունների խթանումը տարածաշրջանում հող կնախապատրաստեն միջազգային կայունության և ԱՄՆ-ի դիրքերի ամրապնդման համար, ապա հարձակվողական ռեալիզմի (offensive realism) հետևորդ վերլուծաբանների կարծիքով «ատամներ ունեցող այս վիլսոնականությունը»,[30] ի դեմս Բուշի դոկտրինայի, զուրկ էր թշնամական միջավայրում գործելու ամուր հիմքերից:

Թերևս սա բացատրվում էր նրանով, որ ի լրումն վերոշյալի՝ ԱՄՆ-ը եվրոպական որոշ պետությունների նման չուներ Մերձավոր Արևելքում գաղութատիրական անցյալ և արաբական պետությունների կողմից պրոիսրայելական և ռասիստական անվանված «Մեծ Մերձավոր Արևելքի» նախագիծը կյանքի կոչելիս ամբողջովին օբյեկտիվ չէր գնահատում մերձավորարևելյան իրականությունը: Ուստի Մերձավոր Արևելքում ԱՄՆ-ի՝ ռազմական գերակայության և

[29]Pressman J., նշվ. աշխ., էջ 170:

[30] Mearsheimer J., Hans Morgenthau and the Iraq war: realism versus neo-conservatism, p. 1-2, http://mearsheimer.uchicago.edu

միակողմանի գործողությունների միջոցով ազատ շուկայական հարաբերություններ, մարդու և քաղաքացու իրավունքների պաշտպանություն, ժողովրդավարության խթանում և սահմանադրական փոփոխություններ իրականացնելու ճանապարհը հիմնախնդրի լավագույն լուծումը չէր: Ջորջ Բուշ կրտսերի օրոք ԱՄՆ-ը, ելնելով ամերիկյան բացառիկության սկզբունքից և Կրաութհամմերի որակմամբ՝ «միակողմանիության պահից» (unipolarity moment), փորձեց Մերձավոր Արևելքում ներդնել լիբերալ կապիտալիստական ժողովրդավարություն և արևմտյան տիպի քաղաքական ու տնտեսական ինստիտուտներ, մի տարածաշրջանում, որտեղ ոչ միայն մեծ ծավալ էին ընդունել հակաամերիկյան տրամադրությունները, այլև գոյություն չուներ ժողովրդավարության և ժողովրդավարական ինստիտուտների պատմություն:

ASTGHIK HAYRAPETYAN
(IOS)

THE MAIN THRUSTS OF THE US MIDDLE EAST POLICY DURING THE PRESIDENCY OF GEORGE W. BUSH (2001-2009)

During the first 200 years of its existence the key directions of the US state foreign policy was the policy of isolation and non-interference in the European affairs in parallel with the above-mentioned emphasizing the enhancement of trade relations.Continuous and increasing involvement of the US in the world politics conditioned the formation of bi-polar world being expressed at the regional level by the division of spheres of influence. Therefore, under the post-Cold war new world the US had to re-evaluate its foreign policy in particular by finding a new target to counteract.

George W. Bush’s presidency differs from the aspect of the US foreign policy conversion as well as satisfaction of needs and interests of narrow political elite to a certain extent. Inter alia, the Bush doctrine as a neo-Reaganite legacy, which embraced all the basic principles and instruments of

foreign policy implementation as well as the legal documents envisaging and stipulating those measures, was best expressed in the Middle East policy legitimizing preventive strikes and the use of force in the fight against terrorism as well as in the spread and promotion of democracy and protection of human rights.

During George W. Bush presidency the US Middle East policy was implemented in 3 thrusts` war on terror, prevention of WMB proliferation as well as promotion of democracy. These political directions were stipulated by the National Security Strategies (2002, 2006) and other official documents stemming from them and were asserted and confirmed in the speeches of various representatives of the Executive Office of the president.

The purpose of this report is to present the three main directions of the US Middle East policy, the basic tools and instruments for their implementation, as well as the contradictions between the aforementioned directions and the overall assessment of the Middle East policy and its implications.